

Լ. ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՌԻՆԻ 9 ՄՐՅԱԿԻՅ

ԵՐԵՒԱՆ, 8 (ՌԷՍՊԵԿՏ).- Հայաստանի մեջ նախագահական յառաջիկայ ընտրութեանց համար թեկնածուներու արձանագրութեան պայմանագրով վերջ գտաւ Երկուշաբթի օրը։ Ընտրական Յանձնախումբը յայտնեց, որ նախագահ Լ. Տեր Պետրոսեան պիտի ունենայ 9 մրցակից, որոնց շարքին են Վ. Մանուկեան, Ս. Մանուչարեան եւ Ս. Պատախեան։

Մինչեւ 2 Օգոստոս, թեկնածուները պետք է ներկայացնեն 25ական հազար գորակցող քուէ։


ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

ازتاک حیدرہ یومۃ ساسیة وادیة - الدیرة السوۃ, إلیترویشیکان

1000 Լ.Ո. 71րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 102 (19402) ԵՐԵՎԱՆԹՅՈՒՆ 9 ՅՈՒՆԻՍ 1996 10 ԷՁ

Des Prix Frais pour un Été Chaud



60%

• Rabais jusqu'à 60%
• Paiement échelonné sur 10 mois
• Sans intérêts, sans 1^{er} versement

Tapis: Persan-Chinois-Européens-Moquettes-Papiers peints

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ՝ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ՕՐԱԿԱՐԳԻՆ

Լիբանանի քաղաքական բեմի բոլոր լուսարձակները ալսօր պիտի ուղղուին դեպի Նըթմէ հրապարակ, ուր խորհրդարանը պիտի բանալ ընտրական օրենքին քննարկման յատկացւած իր արտակարգ ժողովը։

Բոլոր նախնազանգները ցոյց կու տան, որ խորհրդարանին նիստը (որ կրնայ երկարիլ 3 օրուան վրայ) պիտի ըլլայ տաք. արդարեւ, ընտրական օրենքին կառավարութեան կողմէ վաւերացումէն առաջ իսկ, բայց նաեւ անոր որդեգրումէն ետք, օրենքին ուղղուած հրապարակային քննադատութիւնները կրնան արձագանգ գտնեն խորհրդարանին մէջ։ Այս բոլորով հանդերձ, նոյն այդ նախնազանգները ցոյց կու տան, որ օրենքը պիտի ստանայ խորհրդարանին կնիքը, որ իրողապէս պիտի ըլլայ վերջին կասկածները փարատող ապացոյցը եւ ընտրապայքարի դաշտը պիտի բանալ թեկնածուներուն առջեւ։

Խորհրդարանի արտակարգ նըստաշրջանին օրակարգի միակ նիւթը ընտրական օրենքը չէ, թեւեւ անկիւս պիտի ըլլայ տիրապետողը։ Խորհրդարանը օրակարգի վրայ ունի մօտաւորապէս 60 օրինակիծք եւ բաւանդներ։

ԲՈՒՅՐԱՄԱՐՏԵՐԷ ԵՏՔ

ԷՐՊԱՔԱՆ - ՉԻԼԷՐ

ԶԻՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՇԱՅՑԱՒ ՎՍԱՅՈՒԹԵԱՆ ՔՈՒՆՆ

ԱՆԳԱՐԱ, 8 (ՌԷՍՊԵԿՏ).- Հանրապետական Թուրքիոյ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, իսլամական կուսակցութիւնը մը Երկուշաբթի օրը ստանձնեց կառավարութեան ղեկը։ Արդարեւ, Թանսու Զիլինհի ճետ կառավարական ընկերակցութիւնը մը կազմած Նեմէլ տփնէ Էրպաքանի դահլիճը քուէներու փոքր առաւելութեամբ մը շահեցաւ խորհրդարանին վստահութիւնը։

Վստահութեան քուէի նիստը եղաւ նախատեսուածէն շատ աւելի տաք։ Արդարեւ, Զիլինհի ճետերող կարգ մը երեսփոխաններ ղէմ քուէարկեցին կառավարական ընկերակցութեան։ Անոնց շարքին էր նախկին արտաքին գործոց նախարար Էմրէ Զօնեսայ, որ այլ երեսփոխանէ մը բունեցքի հարուած մը ստացաւ։ Դէպքը միակը չէր։ Ըստ ականատեսներու, այլ երեսփոխան մը ատրոճանակ մը քաշած է, նաեւ՝ արձանագրուած են բունցքաւստի, այլ ղէպքեր։ Նիստը ընդհատուեցաւ պահ մը եւ խորհրդարանի նախագահ յայտարարեց, որ մէկ մարդ ազատ է իր ուզած ձեւով քուէարկելու։

Ժողովը յանգեցաւ Էրպաքանի կառավարութեան հաստատման, 278ի ղէմ 265 քուէով։ Այսինքն, Էրպաքան - Զիլինհի ընկերակցութիւնը ունեցաւ նուազագոյնէն միայն 3 քուէ աւելի։ Զիլինհի ճետերողը բազմաթիւ երեսփոխաններ ղէմ քուէարկեցին։ Կառավարութիւնը յաջողեցաւ շնորհիւ ծայրայեղ աջակողմեան կուսակցութեան մը 7 երեսփոխաններուն քուէներուն։

ՊԵՆԿԱԶԻՒ ՍԷՋ ՔԱԶԱՖԻ

ՅԻՆԳ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ՄՊԱՆՈՒԱԾ

ՄԱՐՍԱ ՄԱԹՐՈՒՀ, 8 (ՌԷՍՊԵԿՏ).- Լիպիոյ ծովեզերցալ Պենկազի քաղաքին մէջ հինգ գոհր արձանագրուած են, երբ ոստիկանութիւնը բախում ունեցած է իսլամականներու հետ, որոնք անկարգութիւններ կը ստեղծէին քաղաքին տարածքին, յայտնեցին Եգիպտոս հասնող ճամբորդները։

Ականատեսները աւելցուցին, որ Կիրակի օր տեղի ունեցած բախումին ընթացքին սպաննուած են նաեւ ոստիկան սպայ մը եւ երկու իսլամական գինեալներ։ Ծամբորդներուն տուած տեղեկութիւններուն համաձայն, Լիպիոյ ղեկավար Մուամմար Քադաֆի ապահովութեան ուժերուն հրահանգած է առանց հարցուփորձի սպաննել իսլամական շարժումներու անդամները։

ՔՈՒՊԱՑԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՍԸ

ՔՈՒՊԱԿԱՆ ՕԴԱՆԱԻ ՍԸ ԱՌԵԱՆԳԵՑ

Քուպացի սպայ մը երէկ առեւանգեց քուպական ներքին գիծի վրայ թռիչք կատարող օդանավ մը եւ գայտարաւ Կուանթանամոյի (Քուպայի հիւսիսային ափին) ամերիկեան խորհրդի, ուր քաղաքական ապստանեալի իրաւունք խնդրեց։ Քուպացի գինուորակները ձերբակալուեցան։

Ուաշինկթընի դատաւարտեց առեւանգումը, բայց չըսաւ, թէ արդեօք Հաւանայի պիտի յանձնէ՞ գայն։

(ՌԷՍՊԵԿՏ)

ՔԼԻՆԹԸՆ ՊԵՏՔ Է ՃՆՇԷ ՆԵԹԱՆԻԱՀՈՒԻ ՎՐԱՅ

Կ'ԸՍԷ ԴԱՄԱՍԿՈՍ

ԴԱՄԱՍԿՈՍ, 8 (ՌԷՍՊԵԿՏ).- Սուրիա Երկուշաբթի օրը կողուողեց Միացեալ Նահանգներուն նախագահ Պիլ Քլինթոնի եւ անկէ պահանջեց ճշուժ Բանեցնել Խորաշէլի վարչապետ Պենիամին Նեթանիահուի վրայ, որպէսզի ան չմերժէ «Հողի փոխարէն խաղաղութիւն» սկզբունքը։

Սուրիական պաշտօնական մամուլը կը գրէ, որ Նեթանիահուի - Քլինթոն տեսակցութիւնը, որ տեղի պիտի ունենայ Երեքշաբթի օրը, իսկական փորձաքար մը պիտի ըլլայ Միացեալ Նահանգներուն համար։

«Պաաս» օրաթերթը կը գրէ, որ օգտակար պիտի ըլլայ, եթէ ամերիկեան կառավարութիւնը Նեթանիահուի պաշտօնապէս տեղեկացնէ, որ խաղաղութեան գործընթացին հիմնական սկզբունքները մերժելով, Խորաշէլ ոչ միայն նահանջ կ'արձանագրէ գործընթացն, այլ նաեւ կը կործանէ գայն։

«Սիւրիա թալմը», իր կարգին, կը գրէ, որ Ուաշինկթըն պէտք է յստակ եւ կորուսէ կեցուածք որդեգրէ յատկապէս Խորաշէլի կառավարութեան մերժողական կեցուածքին գծով։

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՐԱԲԵՐԻ ԶՈՂԻՆ ՏԱՎ

ԹՈՒՐԲԻԱ ԼՈՒՌ ՄԵՂԱԴՐԱՆՔ Կ'ՈՒՂԴԷ ՍՈՒՐԻՈՅ

ԱՆԳԱՐԱ, 8 (ՌԷՍՊԵԿՏ).- Թուրքիա Երկուշաբթի օրը յայտարարեց, որ պատրաստ է Սուրիոյ ճետ գործակցելու Եփրատի ջուրերուն բաժնեկցութեան հարցով, բայց եւ այնպէս Դամասկոս պէտք է վերջ տայ քուէր ընդդիմադիրներուն իր ենթադրեալ գորակցութեան։

Արտաքին գործոց նախարարութեան բանբեր Օմէր Աքպըլ շեյտեց, որ երկու երկիրներուն մէջ ներկայիս հիմնական հարցը ջուրը չէ, այլ ահաբեկչութեան գորակցելը։

Սուրիա Շարաֆ օրը յայտարարած է, որ Թուրքիոյ ճետ ջուրի բաժնեկցութեան համաձայնագիրի մը չգործիւթիւնը կը խանգարէ երկու երկիրներուն միջեւ լաւ կապերը։

Եփրատի ջուրերէն օգտուող Սուրիոյ եւ Իրաքի միջեւ շարաքավերջին տեսակցութիւններ տեղի ունեցան, համակարգելու համար իրենց կեցուածքը Թուրքիոյ ղէմ։ Երկուքն ալ կը գտնուէին, որ Եփրատի վրայ Թուրքիոյ կառուցած ամբարտաշէնները կը նուազեցնեն իրենց ջուրի քանակը։

ՇԱՐՈՆ ՄԻԱՑԱԻ ՆԵԹԱՆԻԱՀՈՒԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Արիէլ Շարոն երէկ լայն դուռնէն մուտք գործեց իսրայէլեան կառավարութեան կազմէն ներս։ Վարչապետ Նեթանիահուի, ղէպի Ուաշինկթըն ճամբայ ելլելէ քանի մը ժամ առաջ, խնդրաշարժեց եւ ծայրայեղական Շարոնը նշանակեց թեան նախարար էր եւ կազմակերպած՝ Լիբանանի վրայ 1982ի յարձակումը։ Անոր նախարար նշանակումը գալը յիշուցէ պատճառէ արարական երկիրներուն հետ բանակցիլ ջուրի բաժնեկցութեան ծրագիրներու շուրջ։

Շարոն պաշտպանուած են նախարար էր եւ կազմակերպած՝ Լիբանանի վրայ 1982ի յարձակումը։

ԻՐԱՆ ԵԳԻՊՏՈՍԷՆ ՓԱՍՏ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ

ԹԵՀԵՐԱՆ, 8 (ՌԷՍՊԵԿՏ).- Իրանեան օրաթերթ մը յարձակողական ոճ մը որդեգրեց Եգիպտոսի նախագահ Հիւսէնի Մուպարաբի ղէմ, դիտել տալով, որ ան նախ օրը մէկ կարգ ու կանոն թող հաստատակ եւ ոչ թէ Իրանը մեղադրէ արաբական երկիրներուն մէջ ընդդիմադիրներու գորակցութեան համար։

«Իրան Նիւզ» կը գրէ, որ Եգիպտոս կամ որեւէ այլ երկիր թող փաստեր ներկայացնեն Իրանի ղէմ ուղղուած ամբաստանութիւններուն մասին։ Անոնք այս քայլին չեն դիմեր, որովհետեւ փաստեր չունին, կ'աւելցնէ օրաթերթը։

Մուպարաբ Կիրակի օրը ըսած էր, որ Եգիպտոս մերժած է սուրիական միջնորդութիւն մը եգիպտացի եւ իրանցի նախարարներուն հանդիպումի մը համար։

ԾԵԾ, ՍԻՆՉԵՒ ՀԻՒԱՆԴԱՆՈՅ

ՀԵՊՐՈՆ, 8 (ՌԷՍՊԵԿՏ).- Իսրայէլացի գինուորներ, որոնք ինքնաշարժ մը կանգնեցուցած էին Հեպոնի մէջ անցարգելի մը վրայ, այնքան իրտահարուածներ տեղացուցած են անոր մէջ գտնուող երկու պաղեստինցիներուն վրայ, որ անոնք հիւանդանոց փոխադրուեցան։

Ականատեսները յայտնեցին, որ գինուորները ինքնաշարժէն դուրս հանած են 25 տարեկան Ատնան Քաուաւա մէն եւ անոր եղբայրը՝ 22 տարեկան Անուարը եւ ապա ծեծած են գիրները։ Միջադէպը տեղի ունեցած է Կիրակի գիշեր, Քիրիաթ Արապ բնակեցման վայրին մօտ։ Իսրայէլեան բանակը յայտնեց, որ պիտի ստուգէ այս տեղեկութիւնները։

ՀԱՅԱՍՏԱՆ - ԹՈՒՐԲԻԱ «ԲԱՐԻ ԴՐԱՅՆՈՒԹԵԱՆ» ԱՊԱՅՈՅՑ...

ԹՈՒՐԲ ԶԻՆՈՒՈՐ ՍԸ ՎԻՐԱՒՈՐԵՅ Հ. ԲԱԳՐԱՏԵԱՆՆ ՌԻ Վ. ՍԱՐԳՍԵԱՆԸ

Հայաստանի վարչապետ Հրանդ Բագրատեան, պաշտպանութեան նախարար Վալգէն Սարգսեան եւ անոնց մէկ ընկերակիցը երէկ վիրաւորուեցան Թուրքիոյ սահմանին վրայ, թուրք պիսուորի մը կողմէ քաջուած կրակոցին հետեւանքով, հաղորդեց «Ինթըրֆաքս» լրատու գործակալութիւնը։

«Ռեթոր» երէկ ուշ գիշերին արձագանգ եղաւ միջադէպին, որ յաւելեալ ապացոյց մըն է թէ թուրք ինչ կը հասկնայ բարի դրացնութեան յարաբերութիւն ըսելով...

Ըստ «Ռեթոր»ի հետազոտարիւն, Բագրատեան, Սարգսեան եւ քանի մը ընկերակիցներ սահմանին մօտ (ճիշդ վայրը չի նշուիր) հանդիպում ունենալու զայցած են Կարսի կառավարիչին հետ։ Հանդիպումին նպատակը չի յիշատակուիր հետազոտարիւն մէջ։ Կարսի կառավարիչին ընկերացող պիսուոր մը լանկարծ կրակ քաջած է հայկական պատուիրակութեան վրայ։ Հ. Բագրատեան վիրաւորուած է թեթեօրէն, սակայն Վ. Սարգսեան եւ երրորդ մը անէի ծանր վերքեր ստացած են։ Հայկական պատուիրակութեան ընկերացող պիսուորներ կրակ քաջած ու սպաննած են թուրք պիսուորը։ Միջադէպին պահուն, վիրաւորուած է նաեւ Կարսի կառավարիչը։

ՈՒՇԻՆԿԹԸՆ ՄԵԿՆԵԼԷ ԱՌԱՋ

ՆԵԹԱՆԻԱՀՈՒ ԿԸ ՔԱԶԱԼԵՐԷ ԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ

Սիւս կողմէ, Նեթանիահուի կը շարունակէ հաստատ մնալ իր կեցուածքին վրայ՝ մերժելով «Հողի փոխարէն խաղաղութիւն» սկզբունքը։ Նեթանիահուի յայտարարեց, որ նախագահ Քլինթոնի պիտի ըսէ, որ ինք կ'առաջարկէ իսրայէլացի քուէարկողին տուած իր խոստումներուն։

Նեթանիահուի կը խոստը յարաբերութեան քուէարկողին, որովհետեւ Բագրատեան, Սարգսեան եւ երրորդ մը անէի ծանր վերքեր ստացած են։ Հայկական պատուիրակութեան ընկերացող պիսուորներ կրակ քաջած ու սպաննած են թուրք պիսուորը։ Միջադէպին պահուն, վիրաւորուած է նաեւ Կարսի կառավարիչը։

Սիւս կողմէ, Նեթանիահուի կը շարունակէ հաստատ մնալ իր կեցուածքին վրայ՝ մերժելով «Հողի փոխարէն խաղաղութիւն» սկզբունքը։ Նեթանիահուի յայտարարեց, որ նախագահ Քլինթոնի պիտի ըսէ, որ ինք կ'առաջարկէ իսրայէլացի քուէարկողին տուած իր խոստումներուն։

Նեթանիահուի կը խոստը յարաբերութեան քուէարկողին, որովհետեւ Բագրատեան, Սարգսեան եւ երրորդ մը անէի ծանր վերքեր ստացած են։ Հայկական պատուիրակութեան ընկերացող պիսուորներ կրակ քաջած ու սպաննած են թուրք պիսուորը։ Միջադէպին պահուն, վիրաւորուած է նաեւ Կարսի կառավարիչը։

ԱՐՑԱԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆԸ ԿԸ ՍՏԱՆՁՆԷ ԶԱՏՐՈՒԹԻ ԵՐԿՈՒ ԳԻՂԵՐՈՒ ՎԵՐԱՇԽԻՆՈՒԹԵԱՆ ԾԱԽՍԸ

Լիբանանի Արցախի Օժանդակութեան Մարմինը վերջերս ստանձնած է Հատուկ սահմանաշին Առաքել շրջանի երկու գիւղերու վերաշինութեան ծախսերը։ Այս նպատակով, Մարմինը 76 հազար ամերիկեան տոյալի յատկացում մը պիտի կատարէ Ֆրանս - Ղարաբաղ կազմակերպութեան, որուն հետ գործակցաբար պիտի իրականացնէ Մամձոր եւ Ձորագիւղ գիւղերու վերակառուցումը։

Հատուկ սահմանաշին գիւղերը ռազմագիտական կարեւոր դիրք ունին եւ անոնց վերաբնակեցումը կ'ապահովէ Լ. Ղ. Հանրապետութեան հարաւային դարպասը։

Մարմինը արդէն իսկ 35 հազար ամ. տոյալ փոխանցած է Ֆրանս - Ղարաբաղ կազմակերպութեան, որուն վերահսկողութեամբ կը կատարուին շինարարական աշխատանքները։

ԼԻՊԱՐԻՏԵԱՆ - ԿՈՒԼԻԶԱՏԷ ԶԱՆԴԻՊՈՒՄ՝ ՊՈՆԻ ՍԷՋ

Հայաստանի նախագահի խորհրդական ժիրալը Լիպարիտեան անցեալ շաբթուան կիսուն Պոնի մէջ հանդիպում ունեցած է Ազրպէյճանի նախագահի խորհրդական Վաֆա Կուլիյաւալի հետ։

Խորհրդակցութիւնները ընդգրկած են Ղարաբաղի տագնապին լուծման միջոցները։

ԻՅՀԱՐ ՄՈՐՏԵՆԱՅ՝ ԼԱՏԻՆ

«ՊԻՏԻ ԶՏԵՌԱՆԱՆՔ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԷՆ»

«Հարաւային Լիբանանի Բանակ»ի հրամանատար Անթուան Լահտ երկէ մեկնեցաւ Թէյ Աւիւ եւ տեսակցութիւն ունեցաւ Իսրայէլի պաշտպանութեան նախարար Իցհաք Մորտեսայի հետ:

Իսրայէլեան ծայնասփուռին համաձայն, Մորտեսայ եւ Լահտ քննարկած են Հարաւի «սահմանային գոտի»ի ապագան:

Մորտեսայ յայտարարեց, որ Իսրայէլ պիտի չլքէ Հարաւի իր զաշնակիցները եւ լիբանէ իսրայէլեան տագնապի որեւէ լուծում պիտի ընդգրկէ նաեւ երաշխիքներ անոնց ապահովութեան համար: «Մենք պէտք է գորացրենք մեր դիրքերը Հարաւի մէջ եւ պէտք է գարագաններ մեր բանակին կուռելու կարողութիւնները», աւելցոց իսրայէլացի նախարարը:

Այս հանդիպումը կը յաջորդէ այն տեղեկութիւններուն, ըստ որոնց՝ վարչապետ Նեթանիահու եւ մտածէ իսրայէլեան ռեժիմը դուրս բերել գրաւեալ գոտիէն, սահմանին վրայ ապահովութեան խիստ միջոցառումներ որդեգրելէ ետք:

ԹԱՊՊԱՐԱ ԹԵԿՆԱԾՈՒ ԶԷ

Արդարութեան նախարար Պահիթ Թապպարա երկէ յայտարարեց, որ խորհրդարանին ներկայացուած ընտրական օրէնքը չի բաւարարեր իր ակնկալութիւնները: Ան նաեւ հաստատեց, որ թեկնածու պիտի չներկայանայ երեսփոխանական ընտրութիւններուն:

Նախարարը կը խօսէր Հիւսիսի դատարաններուն քննական այցելութեան մը առիթով:

Թապպարա ըսաւ, որ առաջարկուածը ըստ կուլթեան ընտրական օրէնք մը չէ, այլ օրէնսդրական միջոցառում մը, որուն միակ նպատակը ընտրութիւնները սահմանադրական ճշգրտուած ժամկէտին կատարելն է:

Թապպարա դիտել տուաւ, որ շատ հաւանարար ինքնակուլթիկները բաւարար ժամանակ չունին:

ՓԱՂԱՆԳԱՌՈՐԵՐԸ ԱՄԷՆ ՏԵՂ ԹԵԿՆԱԾՈՒ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ

Կ'ԸՍԷ ՍԱԱՏԷ

Փաղանգաւոր կուսակցութեան նախագահ Ժորժ Սատէլ յայտարարեց, որ կուսակցութիւնը երեսփոխանական ընտրութիւններուն պիտի մասնակցի բոլոր ընտրաշրջաններուն եւ նահանգներուն մէջ, ամէն տեղ ներկայացնելով իր թեկնածուները:

Սատէլ շեշտեց, որ ոչ ոք կրնայ մենաշնորհի վերածել քրիստոնէական որոշումը: Անդրադառնալով արտասահմանեան ընդդիմութեան կեցողածին, Սատէլ խուսափեցաւ այս գծով յստակ ընութեազրում կատարել, սակայն դիտել տուաւ, որ չի հասկնար նախկին նախագահ Ամին Ժրմայէլի եւ գոր. Միշլ Աուրիի զաշիքին կուլթիւնը: «Զեմ գիտեր, թէ ինչը այս երկուքը կը միացնէ իրարու», ըսաւ Սատէլ:

ՆԱԵԻ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐԸ

Ընտրութիւններուն իր մասնակցութիւնը յայտարարեց նաեւ Լիբանանի Համայնապար կուսակցութիւնը: Կուսակցապետ Տահրուտ հադորդեց, որ կուսակցութիւնը պիտի ներկայացնէ 8 թեկնածու՝ չորս նահանգներուն եւ Լեռնայի լիանանի Այլի եւ Շուֆ գաւառներուն մէջ:

Նիկին աւելի կատարեալ օրէնք մը բանաձեւելու: Ան անհրաժեշտ համարեց, որ յառաջիկայ տարիներուն լուրջ աշխատանք կատարել ընտրական օրէնքին վրայ, զայն հասցնելու համար Ձիդ դարու ժողովրդավարութեան մակարդակին:

Թապպարա անհիմն նկատեց այն ենթադրու-

թիւնը, թէ ներկայ կառավարութիւնը կողմնակալութիւնը կողմնակալութիւնը պիտի կատարէ ի նպաստ կարգ մը թեկնածուներու: Ան դիտել տուաւ, որ կարգ մը նախարարներու երեսփոխանական թեկնածու ըլլալը չի նշանակեր, որ իշխանութիւնը խտրական մօտեցում պիտի ցուցարբերէ ընտրական գործընթացին:

ԼԻԲԱՆԱՆ - ԻՐԱՆ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կ'ԸՍԷ ԱԼԻԶԱՏԷ

տաքին գործոց նախարար Ֆարէս Պուէլլի հետ հանդիպումէ մը ետք, Պուսթ-րոս Պայտանի մէջ՝ Հանդիպման ընթացքին քրանարկ ման առարկայ դարձան շրջանային, ինչպէս նաեւ երկու երկրները լուրջ հարցեր:

Այդպէս ըսաւ, որ երկկողմանի լարուածութեան մասին լուրեր տարածողները թշնամի են երկու երկիրներուն եւ կը ձգտին ճեղքը յառաջացնել անոնց միջեւ: Ան վստահեցուց, որ վերջնականապէս լուծուած է նաեւ իրանցիներու Լիբանան մուտքի արտօնադրի շնորհելու լուրջ ստեղծուած թիւրիմացութիւնը:

Այդպէս յայ առիթով դատապարտեց Միացեալ Նահանգները, չըջանին մէջ լարուած կացութիւն պահելու համար: Իրանի դեսպանը դիտել տուաւ, որ եթէ Ուաշինկթոն չահագրգռուած ըլլար Միջին Արեւելքի կացութեամբ, ապա առաջին հերթին պէտք է արագացնէր Ապրիլեան պահանջարկին յանձնախումբի կազմութիւնը:

Կ'ԸՍԷ ԱԼԻԶԱՏԷ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ

ԱՆՆԱԽԵՆԹԱՅ ՇՐՋԱՊՏՈՅՑ

ԴԷՊԻ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՐՑԱԽ

Ամրան ընթացքին լիբանանահայութիւնը առիթը ունի այցելելու Հայաստան եւ Արցախ, ծանօթանալու համար հայրենի բնութեան եւ հաղորդակցելու հերոսական պայքար մղող հայրենակիցներուն հետ:

Յատկապէս Լ. Ղ. Հ. Կրտսէ շրջիկութեան սատարելու նպատակով կազմակերպուած շրջապտույտները տեղի պիտի ունենան երեք հասգրուաններով:

- Առաջին շրջապտույտ 30 Յուլիսին 6 Օգոստոս (դիմելու պայմանաժամ 15 Յուլիս):
- Երկրորդ շրջապտույտ 13 Օգոստոսին 20 Օգոստոս (դիմելու պայմանաժամ 29 Յուլիս):
- Երրորդ շրջապտույտ 27 Օգոստոսին 3 Սեպտեմբեր (դիմելու պայմանաժամ 12 Օգոստոս):

Շրջապտույտին յայտագիրը կ'ընդգրկէ այցելութիւն Չանգեղուի շրջան, ապա մեկնում Արցախ: Ծանօթացում Ստեփանակերտի, այցելութիւն Գանձաւարի, Դադիվանքի, Ամարասի պատմական վանքերը, Սարսանգի շրաքար, Թարառ գետի խովիտը, Մարտակերտի, Մարտունիի, Հատրութի եւ Շուշիի շրջանները:

Մասնակցութեան սակ 650 ամ. տոյար (ներառեալ ճաշ եւ կեցութիւն): Հետաքրքրողներէն կը խնդրուի դիմել Համապայինի Շրջանային Վարչութեան գրասենեակ (Լեռն Շանթ Մշակութային Կեդրոն, հեռ. 265899, Երկուշաբթի Ուրբաթ, Կէսօրէ ետք ժամ 4-ն 6):

ՏԵՂԵՐՈՒՄ ԱՍՏԱՆԱԾԱԿ ԵՆ:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԱՅՍՈՐ ԿԸ ԲԱՆԱՅ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱՏԱՇՐՋԱՆԸ

Այսօր պիտի բացուի խորհրդարանի եռօրեայ արտակարգ նստաշրջանի լիազուար առաջին նիստը, որ ազդանշանը պիտի տայ ընտրական օրէնքի վաւերացման:

Ըստ նախատեսութիւններուն, ընտրական օրէնքի հարցը պիտի վճռուի վաղը կամ Հինգշաբթի: Արդարեւ, խորհրդարան ներկայացուած են նաեւ 57 այլ օրինագիծեր:

Խորհրդարանին կողմէ վաւերացուելէ ետք, ընտրական օրէնքը գործադրութեան պիտի դրուի պետական պաշտօնաթերթին մէջ անոր հրատարակման պահէն սկսեալ:

ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ

Երեսփոխան Հապիպ Սատէք յայտարարեց, որ խորհրդարանին յղուած ընտրական օրէնքը կը հակասէ Լիբանանի սահմանադրութեան եւ Թաէֆի Համաձայնագրի տրամադրութիւններուն:

Ան դիտել տուաւ, որ ընտրական տարադր ամբողջութեամբ ձեւուած է իշխանութիւններու ցանկութիւններուն համաձայն եւ պիտի ծառայէ անոնց դիրքերը ամրապնդելուն:

Սատէք ըսաւ, որ իշխանութեան վրայ գտնուող մարդիկ օրէնքներ կը ստեղծեն, առանց հաշուի առնելու պետութեան եւ պետական հաստատութիւններու շահերը: Ան դիտել տուաւ, որ այսպիսով «Երկիրը կը վերածուի անձնական ազարակներու, ուր ամէն ազարակաւոր կը հետապնդէ իր նեղ շահերը»:

Երեսփոխանը կոչ ուղարկեց Լիբանանի քաղաքացիներին:

ԼԱՅՈՆ ԵՕԹՆԵՐՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՓՈԽԱՆՑԵՅ ՀԸՐԱՌԻԻ

Ֆրանսայի դեսպան Ժան Փիեռ Լաֆոն երկէ այցելեց Պապատայի Պայտոն եւ ընդունեցաւ նախագահ Իլիաս Հըրաուիի կողմէ: Լաֆոն ըսաւ, որ նախագահ Ժաք Շիրաքի թեկնածութեամբ, Հըրաուիի փոխանցած է ճարտարարուեստի Եթեր Մեծերու Լիւնի գերաստիճանին արդիւնքները եւ յատկապէս անոնք՝ որոնք կը վերաբերին լիբանանեան թղթածրարին:

Լաֆոն աւելցուց, որ քննարկման առարկայ դարձած է նաեւ Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Էրվէ Տը Շարէթի Լիբանան կատարելիք այցելութեան օրակարգը:

Պապատայի դեսպանը այնուհետեւ ուղղուեցաւ Պուսթ-րոս Պայտոն եւ տեսակցութիւն ունեցաւ արտաքին գործոց նախարար Ֆարէս Պուէլլի հետ:

ՈՐՈՎ ՀԵՏԵՒ ԱՆՄԵՂՆԵՐ ԵՒՍ ԿԸ ՎԱՐԿԱԲԵԿՈՒԻՆ

«Փրկութիւն եւ Բարեփոխութիւն» երեսփոխանական պլոքի քաները երկէ կ'ուղղեց դատական եւ օրինական մարմիններուն, որպէսզի վերջ ղնեն պոռնկութեան եւ թմրեցուցիչի ծանօթ գայթակցութեան վերաբերեալ տարածաշնորհներուն, որովհետեւ անոնց միջոցով փորձ կը կատարուի վարկաբեկեայնապիսի մարդիկ, որոնք որեւէ կապ չեն ունեցած գործուած յանցանքին հետ:

Մանօթ է, որ մօտ 2 շաբաթէ ի վեր լրատու բազմաթիւ աղբիւրներ կ'արձարծեն հարցը քողագործուած խմբակի մը, որուն անդամները ամբաստանուած են իշխեալ յանցանքներով եւ որոնց շարքին են, ըստ նոյն աղբիւրներուն, պետական ղէմքեր:

Միւս կողմէ, դատական բանբեր մը հերքեց այն տեղեկութիւնները, թէ երկէ հարցաքննութեան ենթարկուած են այս գայթակցողութեան կարգ մը մասնակիցներ: Բանբերը ըսաւ, որ այս հարցը ստանձնած քննիչ-դատաւոր տակաւին որեւէ թեմական չէ ճշդած տրիւրահուչակ խմբակին դատաւարութեան համար:

ՎՐԻՊԱԿ

Մեր երկրուան համարի «Հայ Աւետ. համայնքը Գեղե իր 150ամեակը» լուրին մէջ արձանագրուած է վրիպակ մը՝ վարչապետի ներկայացուցիչն էր Գախարար Յակոբ Տեմիրեանը:

Իսկ Լ.Օ.Խաչի Շրջանային նորակազմ Վարչութեան անդամներուն շարքին պետք է աւելցնել անունը Սեդա Ճուլպանեանի:

ՀԱՄԱԴԱՐԱՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ
ՀԻՄՆԱՐԿԷՐԻՆ

ԱՇԽԱՏԱՒՈՐԸ ԿԸ ՄԵԱՅ ՎԵՐԱԿԱՆԳԵՈՒՄԻ ԵՐԱՇԽԻՔԸ

Կ'ԸՍԷ ՖԱԽՈՒՐԻ

Նախագահ Իլիաս Հըրաուիի հովանաւորութեամբ, երկէ կ'աշխուրեցաւ Հիմնարկէքը Աշխատաւորական Համադաշնակցութեան նոր կեդրոնատեղիին՝ Քուռիշի Նահրի շրջանին մէջ:

Հանդիսութեան ներկայ եղան նախագահի ներկայացուցիչ նախարար Շաուքի Ֆախուրի, իսկ վարչապետը ներկայացուց նախարար Սթեֆան Տուէլլի:

Ֆախուրի բարձր գնահատեց լիբանանեան աշխատող բազմակի գերակատարութիւնը՝ երկրի վերաշինութեան աշխատանքներուն մէջ: Ան շեշտեց, որ աշխատաւոր կը հանդիսանայ Լիբանանի վերակառուցման հիմնական երաշխիքը, որուն պէտք է վերաբերել հոգածութեամբ եւ գուրգուռանքով: Ֆախուրի յայտարարեց, որ աշխատաւորներու տնտեսական եւ ընկերային պայմաններուն բարելաւման համար՝ երկխոսութիւնը կը մնայ ամենա-արդիւնաւէտ ճանապարհը, որ կրնայ իրականացնել աշխատաւորական բոլոր պահանջները:

Համադաշնակցութեան նախագահ Իլիաս Ապու Ռոքք իր հերթին անհրաժեշտ համարեց, որ կառավարութիւնը դիմէ գործաւորական քայլերու, արագացնելու համար աշխատաւորութեան համար անհրաժեշտ շարք մը ծրագիրներու գործադրութիւնը: Ան յատկապէս նշեց Ընկերային - Տնտեսական Խորհուրդի պարագան, որ կոչուած է ըլլալու Համադաշնակցութիւն - կառավարութիւն երկխոսութեան օրինական բեմը:

Ապու Ռոքք նաեւ պահանջեց, որ խորհրդարանը այսօրուան իր նիստին իսկ վերջնականօրէն վաւերացնէ ամսականներու յաւելման, ինչպէս նաեւ ապրուստի հետ կապուած այլ օրինագիծեր:

Անդրադառնալով երեսփոխանական ընտրութիւններուն, Իլիաս Ապու Ռոքք մատակարարութիւն յայտնեց, որ նախընտրական պայքարի մթնոլորտը առիթ դառնայ, որ երկրի տնտեսական եւ ընկերային տագնապները մշտնապէս մէջ: Ան պահանջեց որդեգրուի ընտրական այնպիսի օրէնք մը, որ երաշխաւորէ ժողովրդավարութեան եւ ազատութիւններու պահպանումը՝ ընտրութիւններուն ընթացքին:

ՊԸՐԻ ԵՒ ԶԱՐԻՐԻ ՄԱՆԱԿՑԵՑԱՆ ՖԵՅՍԱԼ ՍԱԼԱՄԻ ՅՈՒՆԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Երկէ կէսօրէ ետք Մէուտական Արարիային Պէյրութի փոխարկուեցաւ մարմինը Նախկին վարչապետ Սաէլ Սալամի որդւթին՝ Ֆէյսալ Սալամի, որ Շարքի օր մահացած էր ինքնաշարժի արկածի մը հետեւանքով: Հանգուցեալին մարմինը Պէյրութի բերուեցաւ Մէուտական Արարիայ Ֆահտ թաղաւորին տրամադրած մէկ օդանւումով: Յուղարկաւորութեան արարողութիւնը սկսեալ Մաքաւէտ հիմնարկին մէջ տեղի ունեցած սգոյ՝ հանդիպումի մը: Միջոցով խորհրդի անդամները արարուեցաւ Սալամի յիշատակի մօզիկներ:

Յուղարկաւորութեան մասնակցեցան խորհրդարանի նախագահ Նախի Պըրրի, վարչապետ Ռաֆիք Հարիրի, նախարարներ, երեսփոխաններ, քաղաքական - համայնքային ռազմաթիւ անձնաւորութիւններ, իսկ արարողութեան նախագահեց հանրապետութեան միւլթիի փոխանորդ շէյխ Մուհամմէտ Ռաշիտ Քապպանի:

Պաշտօնական եւ ժողովրդային ռազմաթիւ պատուիրակութիւնները այցելեցին նախկին վարչապետին, ցաւակցութիւն յայտնելու կորուստին համար: Յաւակցութիւն յայտնողներու շարքին էր Առաջին Տիկին Մուհամ Հըրաուի:

ԲԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● **ԲԱՆԱԿԱՅԻՆ** պարտադիր ծառայութեան երկրորդ ցտակայանի գլխուորները աւարտեցին մարզային շրջանը եւ այդ առիթով ներկայացուցին հրաձգութեան եւ պատերազմական գործողութիւններու փորձեր՝ Ուսթա Ժոյլի մէջ:

Փորձերը տեղի ունեցան ցտակայանի հրամանատարին եւ պատասխանատու սպաներուն հսկողութեան տակ: Բանապայինները դրուեցան իսկական պատերազմի մթնոլորտի մէջ, ստուգելու համար անոնց գլխուորական կարողութիւնները: Փորձերը աւարտեցան հրաձգութեամբ, որոնց ընթացքին օգտագործուեցան իսկական գլխուորները:

● **ԼԻԲԱՆԱՆԵԱՆ** Համայնարանին մէջ բարձրագոյն ուսումնաւորութեան վկայականներ տրուեցան 25 չըջանաւորներու, որոնք աւարտած են յրազրութեան մասնագիտական դասընթացները: Հանդիսութիւնը հովանաւորեց մշակույթի նախարար Միշլ Էտտէ: Անոր կողքին էին մասնագիտական դասընթացներու կազմակերպիչ Լրագրութեան Ֆրանսական Հիմնարկի փոխտնօրէնը եւ Համայնարանի ռազմաթիւ պատասխանատուները:

● **ՓՈՍԹ** - շեճԱԳՐԱԿԱՆ հարցերու նախարար Ֆատիլ Շալաք երկէ մեկնեցաւ Թեհրան, ուր պիտի մասնակցի հաղորդակցութեան մարդի ցարգացման իսլամական երկիրներուն Յոր համագումարին: Համագումարը պիտի տեւէ մինչեւ Յուլիս 11:

● **ԽՄԲԱԳԻՐՆԵՐՈՒ** Սենտիքայի նախագահ Մըլէմ Քարամ երկէ Դամասկոսի մէջ հանդիպումներ ունեցաւ Սուրիոյ վարչապետ Մամուտ Զուհուր եւ պաշտպանութեան ու տեղեկատուութեան նախարարներ Մուսթաֆա Թալաք եւ Մուհամմէտ Սալամին: Քննարկման առարկայ դարձան Լիբանանի ու արաբական աշխարհը յուզող այժմեական հարցերը:

● **ՅՈՒԼԻՍ** 24ին պիտի բացուի Լիբանանի ղեղադրողներուն Յոր համագումարը, նախագահ Իլիաս Հըրաուիի հովանաւորութեամբ: Առաջնապահութեան նախարար Մարուան Համաւէ եւ Դեղադրողներու Ընկերակցութեան նախագահ Ղասսան Ամին երկէ տուին մամուլի ասուլիս մը եւ ներկայացուցին համագումարի օրակարգը:

ԱՐՑԱԽԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻՆ

- Վահագ Փօլատեանի մահուան առիթով (մահացած Քեսապ), Արա Գուլումեան 25.000 լ. ու Նուֆեր Գալլուշեան 25.000 լ. ու Յակոբ Մաքաւեան 25.000 լ. ու Ֆալուս Ջաբալեան 25.000 լ. ու

ԽԱՒԱՐԻ ԱՍՊԵՏՆԵՐ

ԳԼԽԱՏՈՒՄԸ ՊՈՒՊՐԻԿԸ

17 Դեկտեմբեր 1958, Հունգարիա:

Երկինքը այնքան մութ է եւ ամպոտ, որ կափարիչի մը տպաւորութիւնը կը ձգէ: Գետինը ծածկուած է կէս մեթրի հաստութեամբ ձիւնի խառով մը: Զիւնը կը շարունակէ տեղայ խառնրւելով մշուշի թանձր գանգուածին եւ կը ստեղծէ բանդագուշական տեսարան մը, որուն մէջ կը սրսփան մարդու նմանող կերպարանքներ:

Այդ կերպարանքներէն մէկը մանկամարդուհի մըն է, գեղեցիկ մանկամարդուհի մը, որուն դիմագիծը կը յայտնուի, երբ հակառակ կողմ եկող ղեկավառքի մը փարոսը կը լուսամտիւ շնորդ ընէ մը:

Սակայն մանկամարդուհին երկար չի մնար ճամբուն վրայ, երբ կը լսէ բեռնակառքի մը աղմուկը: Անմիջապէս կ'ելլէ ճամբէն, կը քայլէ ձիւնին մէջէն, որ կը հասնի մինչեւ իր գիտտերը եւ կը պահուրտի ծառի մը ետեւը:

Բեռնակառքին յոյսը կը պատմէ մշուշէ վաղադրով: Անոր դրան վրայ, կարմիր աստղի մը տակ, գրուած են ուռեսերէն բառեր: Առաջինին կը հետեւին ուրիշ բեռնակառքեր, որոնց մէջ տեղ առած են գինուորներ:

Երբեմն մանրամարդուհին մինչեւ կէս ժամ կը մնայ ծառին տակ, երկու սրունքները մխրճուած ձիւնին մէջ: Երբ վերջին բեռնակառքի ետեւի կ'արժայի յոյսը կը մարի մշուշին մէջ, ան կ'ելլէ իր թաքստոցէն եւ կը շարունակէ ճամբան:

Բայց մանկամարդուհին մինակը չէ այս ճամբուն վրայ: Ուրիշ ուրուականներ կը յայտնուին կողմնակի անտառներուն մէջէն եւ, անդադելէ ետք ձիւնին մէջ, կը կորսուին մշուշին մէջ: Անոնք ծրար մը ունին իրենց շայակին, կամ հնամաշ ճամպրուկ մը իրենց ձեւքին: Ատեն - ատեն ձիաքաշ սայլ մը կը յայտնուի: Կառապարտ, անշարժ արձանի մը պէս, հագիւ լսելի ձայնով կը խօսի ձիւրուն հետ: Սայլին անտուկին մէջ ծրարներու եւ ճամպրուկներու վրայ նստած են կիւնք, ծերեր, մանուկներ եւ նոյնիսկ տղամարդիկ:

Երբ մանկամարդուհին դէմ յանդիման կու գայ այդ ուրուականներէն կամ սայլերէն մէկուն, չի նետուիւր ձիւնածածկ դաշտերուն մէջ, այլ անոնց ճամբայ տալով կը շարունակէ քայլել: Զարմասալին հոն է, որ անոնք չեն քայլեր նոյն ուղղութեամբ: Ուրուականներու սայլերը կ'ուղղուին դէպի արեւմուտք, դէպի աւստրիական սահմանը, իսկ ինք՝ դէպի արեւելք, դէպի մայրաքաղաք Պուտափէշտ, որուն իւրաքանչիւր խաչներուկին վրայ կը հսկեն խորհրդային գինուորներ եւ հրասայլեր:

Մանկամարդուհին կը քայլէ ժամերէ ի վեր, կը քայլէ դէպի այն կողմը, ուրկէ կը փչէ ձիւնամորրորիկը, որուն ալքները անտեսանելի ձեւքն մը ապտակներուն պէս կ'իջնեն դէմքին վրայ: Զիննի խաւը երթալով կը թանձրանայ: Ոտքերը սոււելու վրայ են:

Այդպիսով շատ հեռու է եւ ճամբան երկար: Աւտուան ժամը երեքն է, երբ յանկարծ իր շուքը կը նշմարէ ձիւնին վրայ կը նկատէ, որ կը գտնուի ինքնաշարժի փարոսին լուսաձափին մէջ:

Զարմասալի՛: Ինչպէ՛ս կ'ըլլայ, որ չէ լսած ինքնաշարժին աղմուկը: Արդեօք անո՞ր համար, որ հովը կը փչէ հակառակ ուղղութեամբ, կամ այն է, որ վարորդը գինք անկնկալի բերելու համար մարած է շարժիչը:

Քիչ մը կը շեղի լուսարձակէն եւ կը նայի ետեւը: Եղածը բեռնակառք մը չէ այլ աթուղակով մոթոսիվիթ մը, որուն վրայէն երկու հոգի վար կ'իջնեն եւ կը քայլեն իր կողմը: Մետաղի չոր շաշիւն մը կը յայտնէ, որ անոնք լարած են իրենց քայանիքովները:

Մանկամարդուհին չ'երկնջիր, նախ անոր համար որ կ'անկալէր այսպիսի միջադէպ մը եւ մանաւանդ անոր համար, որ Հունգարիոյ ամէնէն նշանաւոր պայրիննան էր՝ Տորա Ժենատին: Ան պարած էր ընկերավարական պլոքի մեծագոյն օփերաներուն բեմերուն վրայ, Պուտափէշտէն մինչեւ Մոսկուա, անցնելով Փրակայէն, Սոփիայէն եւ Վարշաւայէն:

Տորա պարած էր նաեւ Մոսկուայի Պուշոյ թատրոնի բեմին վրայ, խրուչչեւի եւ Պուլկանիւնի ներկայութեան, որոնք գինք յոտնկայս ծափողջուներէ ետք անձամբ շնորհակատած էին:

Բայց եկուր տես, որ գինք դիմաւորող գինուորները կարճ հասակ ունէին եւ մոնկողատիպ դիմագիծ:

- Ո՛վ ես եւ ի՞նչ կ'ընես հոս, - կը հարցնէ գինուորներէն մէկը:
- Տորա Ժենատի:
- Ինքնութեան թուղթ ունի՞ս:
- Ինքնութեան թուղթի պէտք չունիմ, Հունգարիոյ մէջ չկայ մէկը, որ չճանչնայ Տորա Ժենատի պայրիննան:

Մոնկողիոյ տափաստաններէն եկող այս երկու գինուորները կրնան անցած ըլլալ Պուտափէշտի օփերայի առջեւէն, բայց՝ չճանչնալ Հունգարիոյ ամէնէն նշանաւոր պարուհին:

Մէկ խօսքով, Տորա ինկած է թակարդի մը մէջ եւ ճամբան շարունակելու փորձերը ապարդիւն կը մնան:

Խաւարին մէջէն կը յայտնուի բեռնակառք մը եւ Տորա կը ստիպուի տեղ առնել անոր մէջ:

- Ո՛ւր կը տանիք գիս, կը հարցնէ:
- Ա՛վ - Օ - կը պատասխանէ գինուորներէն մէկը:

Այս լսելով՝ Տորայի ծունկերը կը կթոտին:

Ա՛վ, Օ ն համայնավար Հունգարիոյ գաղտնի ոստիկանութիւնն է, մէկ խօսքով անոր Ք. Կ. Պ. ն:

Ամէնէն մօտիկ քաղաքը կը կոչուի Զոռան: Բեռնակառքը կանգ կ'առնէ գանգուածային չէնքի մը առջեւ, որուն նախասրահին մէջ խճողւած են ուրիշ բեռնակառքերէ իջած անձեր: Մոթոնյորտը բեռեւային է: Տորա, որուն հազուատները խլտում եղած են, կը դողդղայ հողմածած տերեւի մը պէս:

Շատ չանցած երեք պաշտօնեաներ կ'անցնին

սրահին մէջէն՝ արհամարհական նայուածք մը նետելով խլեակներու այս ամբոխին վրայ: Երբ պահակ ոստիկանը անոնց ականջին բան մը կը փսփսայ, անոնք կանգ կ'առնեն պահ մը եւ վերէն վար կը չափեն այս գեղեցիկ կինը, որուն առջեւ քանի մը օր առաջ պիտի ուզէին ծուկի գայ: Անոնց անտարբերութեան տակ թաքնուած է հիացում եւ ակնածանք այս գեղեցիկ կնոջ հանդէպ, որ իր թրջուած հագուստներուն մէջ իսկ ունի թագուհիի կեցուածք մը:

Տորա կը գուշակէ այդ եւ կը գգայ անհուն գուհուակութիւն մը: Ինք Հունգարիոյ աստղերուն աստղը է, եւ կրսաւառնի այնքան րարձելն երկնակամարին մէջ, որ դարձած է անմատչելի՝ նախարարներուն եւ իշխանաւորներուն համար:

Տորա ամուսնացած է հունգարացի բժիշկի մը հետ, որ կը տնօրինէր Երկրագործական Գիտութիւններու կաճառը: Ան, թէ եւ իրմէ քիչ մը աւելի տարիքտ, վիպապաշտ մտաւորականի տիպար մըն էր: Իրենց ամուսնութենէն ծնած է աղջիկ գաւակ մը, որ Տորա կը կոչուի իր մօր պէս:

Երբ 23 Հոկտեմբերին պայթեցաւ Պուտափէշտի ռմբոստութիւնը եւ ստեղծուեցաւ Յեղափոխական Կոմիտէ մը, ուսանողները բժիշկը ուսամարմն գտտցնելէ ետք մայրաքաղաքի փողոցներուն մէջ՝ գայն նախագահ նշանակած էին այդ Յեղափոխական կոմիտէին: Իսկ օփերայի անձնակազմը իր Յեղափոխական խորհուրդին նախագահուհի նշանակած էր Տորա Ժենատին: Տորայի առաջին գործը եղած էր յայտարարէն ջնջել այն գործերը, որոնք քարոզչական բնոյթ ունէին:

Օփերան դարձած էր ազգային, եւ բացումը նախատեսուած էր 8 Նոյեմբերին: Սակայն երկու օր առաջ, 4 Նոյեմբերին, որ Կիրակի մըն էր, խորհրդային 18 գօրաբաժիններ կը խուժէին երկիր: Ուլժ օր յետոյ Հունգարացիներու ազատութեան երազները ցնդած էին խորհրդային հրասայլերու եւ թնդանօթներու հարուածներուն տակ:

Համագգեստաւոր մը կը մօտենայ Տորա Ժենատիի եւ գայն կը հրաւիրէ իրեն հետեւելու: Սենեակը, ուր կը մտնէ, ընդարձակ է եւ ջերմ: Հաստափոր վառարան մը կարմրած կողերով բազմած է սենեակին կեդրոնը:

Տորա կը գգայ, որ կը գտնուի աստիճանաւոր ոստիկանի մը առջեւ, որ առանց իր տեղէն ելլելու՝ իրեն աթոռ մը ցոյց կ'ու տայ:

- Հարմարաց, երբ իմացայ, որ մեծն Տորա, մեր մեծագոյն պարուհին, գիշերով, ձիւնամորրիկին տակ, կը ձեմէր դէպի սահման տանող ճամբուն վրայ:

- Սահման, ի՞նչ սահման: Ես կը քայլի անոր հակառակ ուղղութեամբ:

- Ո՛ւր իրթալու համար: Տորա չի պատասխաներ, որովհետեւ կը գտնուի արհաւիր երկնտարանքի մը առջեւ: Լաւագոյնը պէտք է այս մարդոց կարծել տալ, որ շատ մը շատերու պէս փախուստ կու տար երկրէն, մինչդեռ իրականութիւնը ճիշդ հակառակն էր: 18 Հոկտեմբերին, այսինքն դէպքերէն առաջ, խումը մը պարուհիներով գացած էր Վիեննա ներկայացումի մը համար: Հոն սպասած էր ամբողջ ամիս մը այն յոյսով, որ ամուսինը եւ աղջնակը կու գան իրեն կը միանան:

14 Դեկտեմբերին, երբ իմացած էր, որ ամուսինը ձերբակալուած էր եւ աղջկան ճակատագիրը անորոշ էր մնալ, խենթի մը պէս ճամբար ելած էր Վիեննայէն դէպի Պուտափէշտ իր մէկ հատիկ գաւակը գտնելու համար: Եթէ ըսէր իրականութիւնը, ոստիկանները պիտի հասկնային իր վերադարձին պատճառը:

Համագգեստաւորը հեզնական չեչտով մը կը կրկնէ հարցումը:

- Հունգարիոյ մեծագոյն պարուհին կրնա՞յ ինծի ըսել, թէ ինչո՞ւ համար կը գտնուէր դէպի սահման տանող ճամբուն վրայ, աւտուան ժամը 3ին:

Տորա լուռ կը մնայ:
- Եթէ դուք չէք գիտեր, ես կրնամ պատասխանել ձեր տեղը: Դուք պարգապէս փախուստ կու տայիք երկրէն՝ չենթարկուելու համար այն պատճեքն, որուն արժանի էիք ձեր անորոշելի վարմունքին համար ռմբոստութեան ընթացքին: Եթէ ուրիշ բացատրութիւն մը ունիք, խօսեցէ՛ք:

- Ես ուրիշ բացատրութիւն չունիմ:

- Ծա՛տ լաւ, հիմա ձեզ պիտի հարցաքննեմ պատրաստելու համար տեղեկագիր մը: Հարցաքննութիւնը կը տեւէ ժամեր: Մոխրամանը կը լցնուի սիկարէթի կճատներով: Ատենատեն փոքրաւոր մը բահ մը հանքածուխ կը նետէ վառարանին մէջ:

Երբ վերջապէս Տորա կը ստորագրէ տեղեկագիրը, այն տպաւորութիւնը կ'ունենայ, որ կը ստորագրէ իր մահալճիւրը:

Սակայն կը պատահէ ճիշդ հակառակը: Գնդակահարումներու ժամանակը վերջացած է: Ժիշդ է, որ ատենատենն, անցորդ մը կ'իյնայ կասկածամիտ մոնկոյ կամ քայմուք գինուորի մը գրնակին տակ: Հիմա միտքերը հանդարտեցնելու ժամանակն է: Մոսկուա այդ կը պահանջէ, որովհետեւ ամբողջ աշխարհ վրդոված է, եւ ոչ միայն ամէն տեղ հակախորհրդային ցոյցեր տեղի կ'ունենան, այլ կարգ մը համայնավար անձնաւորութիւնները զիգոհ են ստալինեան բրտութիւնները յիշեցնող այս վայրագութիւններուն դէմ:

Տորա Ժենատի չի հաւատար ականջներուն, երբ ոստիկանապետը կը կանչէ իր փոքրաւորը եւ անոր կը հրահանգէ:

- Տիկինը տարէք Պուտափէշտի իր բնակարանը:

Դրացուհի մը իրեն բարի գալուստ մաղթելէ ետք կ'ըսէ՝

- Շատ ուրախ եմ ձեզ տեսնելու, բայց պէտք է ըսեմ, որ ձեր բնակարանը բաւական տոժած է:

Երբ Տորա կը լրանայ իր յարկարաժնին դուռը, կը գարմանայ: Այն տպաւորութիւնը ունի, որ կը գտնուի փողոցին վրայ իշխող պատշգամի մը վրայ: Շուտով կը հասկնայ ասոր պատճառը: Խոււր մը ծակած է իր աղջկան սենեակին պատը, ջարդ ու փշուր բրած է պատուհաններուն ապակիները: Մեփի եւ ապակիի կտորներուն մէջ պառկած է աղջկան տիկնիկը: Խոււրի շերտ մը գլխատած է աղջկան ամէնէն սիրելի խաղալիքը:

Տորա այնքան ցնցուած եւ յոգնած է, որ նրստելուն պէս թիկնաթուի մը վրայ, կը սկսի մրափել: Հագիւ ժամ մը անցած, կը լսէ հեռաձայնի գանգահարումը: Աչքերը կը բանայ. ճիշդ դէմը պատին վրայ ամուսինին ծխամորճներու հաւաքածոյին վերը, կը տեսնէ աղջկան լուսանկարը, որ իրեն կը ժպտի: Հեռաձայնը կը շարունակէ գանգահարել: Բայց ո՛վ կրնայ ըլլալ գանգահարողը, որովհետեւ ո՛չ ոք գիտէ իր ներկայութիւնը տան մէջ:

Երբ ընկալուէր կը մօտեցնէ ականջին, կը լսէ քաղաքական ոստիկանապետին հեզնական ձայնը:

- Ինչպէ՛ս է ձեր որպիսութիւնը: Արդեօք մեր ազգային մեծագոյն աստղը ուրա՞խ է իր տունը գտնուելուն համար: Ի՛նչ լուր ձեր ամուսինէն եւ աղջնակէն:

Երբ ընկալուէր տեղը կը դնէ, Տորա կը նմանի մարդկերի ցեղախումբով բնակուած կղզիի մը վրայ նաւարեկուածի մը: Ամուսինը բանտարկուած է եւ, եթէ դատուի, կրնայ մահուան դատապարտուիլ: Ո՛ւր է աղբոք աղջնակը: Շատ հաւանարար ոստիկանութիւնը կը լրտեսէ իր յիստ ու կացը, տեղափոխութիւնները, հեռաձայնը:

Մտայն եւ ամպտո երկիւք մը կը ճնշէ Պուտափէշտի վրայ: Կը ձիւնէ անդադր: Վառարանութի վերապահուած էր պետական եւ կուսակցական անձնաւորութիւններուն եւ խորհրդային բանակի սպաներուն: Երբեմն հեռուներէն կը լրսւին կրակները, եւ բնապարանը կը ցնցուի, երբ փողոցէն կ'անցնին ծանր հրասայլերը:

Ցայրող օրերը հեռաձայնը կը գանգէ անդադար: Անձանօթ ձայներ ակնջիլին ցէշ լուրեր կը փսփսան, թէ ամուսինը դատուած ու դատապարտուած է մահուան, թէ աղջիկը ձերբակալւած է սահման անցնիլ փորձող փախստականներու հետ:

Պետական Օփերայի համայնավար անձնակազմը, որ վերագրուած է իր դիրքը, եւ իրեն նախանձող միւս պարուհիները անդադար էր հեռաձայնէն գինք վարկարելու համար: Տորա չի համարձակիր լուութեան մատնել հեռաձայնը՝ կասկածներ չարթնցնելու համար: Ան նաեւ չի համարձակիր ցերեկով դուրս ելլել իր գաւակը փնտրելու համար:

Որովհետու Դեկտեմբերի գիշերները երկար

կ'ըլլան, Տորա կ'օգտուի կրակմարրկանխող մութէն եւ կը ջրջի հոս ու հոն: Ան ափ կ'առնէ բարեխաններու տունները խնայալու համար, թէ արդեօք բան մը գիտե՞ն իր գաւկին մասին:

Միակ անձը, որ կրնայ յայտնել գաւկին ուր ըլլալը, ամուսինն է, բայց ինչպէս հաղորդակցիլ անոր հետ, երբ չի գիտեր անոր ո՞ր բանտը ըլլալը:

Եւ ամէն գիշեր Տորա, սպառած եւ լուսարեկ, կը վերադառնայ տուն, որուն պատերին մէկը ծակուած է եւ պատուհանները ապակի չունին: Անոր միակ միխթարութիւնը աղջկան գլխատւած պուպրիկն է:

Հունգարիոյ մեծագոյն պայրիննան, որուն առջեւ մեծագոյն գլուխները կը խոնարհէին, հիմա դարձած է անմատչելի փալլա մը, որուն ոչ ոք կը համարձակի ձեռք երկարել: Անոր վիպապաշտ մարդեղի եւ մեղմ աչքերով ամուսինը, կարծելով որ Հունգարիան ազատագրելու ժամը ննչած է, ձերբակալուած է եւ հաւանարար կը տքայ բանտի մը նկուղներուն մէջ:

Մտայ՝ Մտուէր մը եւ Կաղաղի մը կ'անցնին աննշմար այս ջերմեւանդ հունգարացիներուն համար, առանց որոնք քաջութեան թուրքերը հաւանարար ներխուժած պիտի ըլլային քրիստոնեայ Եւրոպայի սրտէն ներս:

Փոքրիկն Տորա ողջ է: Բարեսիրտ ընտանիք մը, իրրեւ սրբազան աւանդ, գայն ստացած է հօր ձեռքէն եւ կը պահէ իր աչքին լոյսի պէս՝ գետնափոր նկուղի մը անկիւնը:

Իրիկուն մը անձանօթ մը կը ներկայանայ եւ կ'ըսէ՝

- Եկո՛ւր հետս, քեզ մօրդ պիտի տանիմ:

Աղջնակը կը հետեւի անձանօթին: Օդը միշտ ցուրտ է եւ ձիւնոտ: Մարդ աղջնակը կը փաթթէ հաստ վերադրուով մը եւ կը նստեցնէ անցնալ պատշապմէն մնացած ինքնաշարժի մը մէջ: Սոյն տունը, որուն մէջ պահուած էր փոքրիկն Տորան, կը գտնուէր Պուտափէշտի արուարձաններէն մէկուն մէջ: Ինքնաշարժը ճամբայ կ'ելլէ մութ գիշերով եւ բաւական ընթնանայ ետք կը հասնի ուրիշ քաղաք մը եւ կանգ կ'առնէ տան մը առջեւ:

Մարդը աղջնակը կ'առնէ թեւերուն մէջ, կը տանի ներս:

- Մի՛ վախնար, - կ'ըսէ, - ես հօրեղբայրդ եմ, այս տունը մեր տունն է եւ այս տիկինը քու թանթիկդ է:

Տորա շատ անօթի է: Թանթիկը իրեն կու տայ կտոր մը հաց եւ շերտ մը պանիր, որ հաւանարար իրենց ունեցած վերջին պատառն է: Աղջնակը կ'ուտէ հացն ու պանիրը եւ կը քնանայ թիկնաթուի մը վրայ:

Աչքարացին գիւղացի մը կ'առնէ աղջիկը ու կը տանի կայաքան: Անոնք կ'իջնեն գիւղի մը մէջ ու իրենց ճամբար կը շարունակեն հետիւտուի:

Երբ կը տեսնեն համագգեստաւորները, կը պահաւորին ճամբուն փոսին մէջ: Գիւղացին կ'ընտրէ այն ճամբաները, որոնք ամալի են: Կը նախընտրէ նոյնիսկ արահետներ, որոնք կը կորսուին դաշտերու մէջ: Հակառակ այս գգուչութիւններուն, ճամբու մը արձուածքին անոնք կը գտնուին անցարգելի մը առջեւ: Այս անգամ փախուս-

տի միջոց չկայ:

Զինուորները գիրենք կը նշմարեն:

Գիւղացին գրպանէն կը հանէ թուղթ մը եւ գայն կը ներկայացնէ գինուորներուն: Անոնցմէ մէկը, որ ունի ենթասպայի աստիճան, կ'առնէ թուղթը եւ աչք մը նետելէ ետք անոր վրայ՝ կ'ըսէ՝ խաբաշօ : Յետոյ խուզարկել տալէ ետք գիւղացին՝ ճամբայ կու տայ:

Բաւական հեռանալէ ետք գիւղացին կը սկսի խնդալ:

- Ինչո՞ւ կը խնդաս, - կը հարցնէ աղջնակը:
- Որովհետեւ գանոնք խաբեցի: Անոնց ներկայացուցալ պաշտարին դեղագիրը, որովհետեւ անցադիր չունիմ: Գ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԱՐԵՒՈՒՆ ԶԱՌԱԳԱՅԹՆԵՐԸ ԵՒ ՄՈՐԹԻ ԽԼԻՐԴԸ

Ամառնային տաք օրերը դարձնել հասած են, եւ անոնց հետ վերստին բացուած են մարդոց ախորժակները՝ արեւուն տաք շողերուն եւ Միջերկրականի ջուրերուն հանդէպ:

Աւելի գեղեցկանալու նպատակով եւ թուիս մորթունենալու համար մարդիկ նաեւ սովորութիւն դարձուցած են ծամերով արեւու լուսանք առնելու:

Կարծէ սակայն այս մարդիկ մէջ յայտնաբերւած բժշկագիտական վերջին նորութիւններուն տեղեկանալ եւ ապա ինքզինք յանձնել արեւուն կիզիչ եւ վտանգաւոր շողերուն:

ԱՐԵՒՈՒՆ ԴԵՄ ՍԵՐԵՐԸ ԿՐՆԱՆ ԽԼԻՐԴ ՊԱՏՃԱՌՈՂ ՇՈՂԵՐԸ ԶԿԱՍԵՑՆԵԼ

Յունիսի վերջին օրերուն Պիրիւշ Մեախիլը ձրոնըլին մէջ լույս տեսած խմբագրական մը կը յայտնէր, թէ Հետրգ-Հետէ յաւելեալ փաստեր ի յայտ կու գան, թէ մորթի խլիրդի պարագաները աճ կ'արձանագրեն՝ հակառակ արեւու շողերէն պաշտպանող սերեր գործածելու կոչ ընող արշաւներուն:

Պիրիւշ Մեախիլը Աստիւլըլընի մասնագէտներուն համաձայն, արեւու շողերէն պաշտպանող սերերը կրնան արգիլել, որ մորթը արեւէն աչրի, սակայն անոնք խլիրդ պատճառող շողերը չեն կասեցներ եւ արեւու լուսանք առնողներուն ապահովութեան կեղծ գաղափար մը կու տան, կը յայտնէ բժիշկը:


Լոստոնի Սէնթ Թոմաս Հիւանդանոցին մորթի մասնագէտներէն Ճէյն Մրքելը կ'ըսէ, թէ խլիրդի պարագաներու աճին պատճառը կրնայ ըլլալ այն, թէ արեւու ճառագայթները ո՛չ միայն մորթը կ'աչրեն, այլ նաեւ կը քանդեն մարմինին բնական պաշտպանութիւն տուող բջիշները:

Մորթը կարմրելէ առաջ իսկ այդ բջիշները կրնան քանդուիլ անդամախաղակազոյն շողերուն ազդեցութեան տակ, կ'ըսէ բժիշկը՝ աւելցնելով, որ այդ պարագան հաւանաբար մեծ դերակատարութիւն ունի մորթի խլիրդի յառաջացման մէջ:

Ա. Տէ. Էն. Ի (Ժառանգականութեան տուեալները կրող մասնիկներ) վնասը բարդութիւնով՝ 40էն 50 տարի ետք մորթի խլիրդի պարագայ կը յայտնաբերուի, կ'ըսէ Մրքելը: Մարմինին բնական պաշտպանութեան բջիշները կ'օժանդակեն վնասը դարմանելու, կը յայտնէ ան:

Մասնագէտը դիտել կու տայ, որ ուսումնասիրողները ցոյց տուած են, որ մորթի խլիրդի պարագաները աճ կ'արձանագրեն յատկապէս տաք երկիրներ:

րու մէջ, ուր սպիտակամորթ եւրոպացիներ հաստատ-



ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ՄՈՐԹԻ ԽԼԻՐԴ

Մորթի խլիրդի ամբիկացի մասնագէտ մը կը յայտնէ, թէ տարիներ ի վեր բժիշկները կը գուշացնեն մորթի խլիրդի վաճառքը սեռական մը՝ միայնակ պարագաներու անհիմն լինելով, սակայն մորթի խլիրդի նաեւ այլ տեսակներ աւ արձանագրելու քննարկին մէջ կը գտնուին:

Ըստ Հիւսթընի Պէյքըր Բոյլէ Աֆ Մեախիլի բժիշկներէն Էնրիքս Կոլապըլի, մորթի խլիրդի ամէնէն աւելի տարածուած տեսակը Լարսիոն մը շատ աւելի հասարակ պատկան ընթացքին մէջ է:

Լեւուր բժշկագիտական Մարտի համարին մէջ գրելով՝ Կոլապըլի կ'ըսէ, թէ անցեալ տարի Մ. Նահանգներու մէջ Լարսիոն մը 1.2 միլիոն պարագաներ ի յայտ եկած են:

Ձայնակցելով Մեքսիկայի ան մասն կը յայտնէ, թէ փոքր տարիներ արեւու շողերուն ենթարկուելը կը բուսի աճէնէն կարեւոր տեսակը ըլլալ. անչափաւասները եւ պատանիները, որոնք արեւէն կ'աչրին, 40էն 60 տարի ետք անոր հետեւնէն կը կրնան, կը գրէ Կոլապըլի:

ԱՅԼԱԶԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՏԱՆԵՐՈՒ ՄՕՏ ՄԱՐԶԱՆՔԻՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Բրիտանացի հոգեբաններու համաձայն, մարդանք ոչ միայն պատանիները աւելի առողջ կը դարձնէ, այլ նաեւ անոնք իրենք զիրենք աւելի լաւ կը զգան:

Էնտրի Սթեֆֆօ Է. Նեւել Պաթըր Բրիտանիոյ տարածքին ուսումնասիրած են 16 տարեկան 5 հազար հոգի, որոնց բազմաթիւ հարցումներ հարցուցած են իրենց կիսաքնի մասին:

Անոնք Լէնսէթ բժշկագիտական թերթին մէջ կը գրեն, թէ այն պատանիները, որոնք կանոնաւոր մարզանքի կը հետեւին, աւելի լաւ եւ առողջ արդիւնքներ արձանագրած են նաեւ զգացական համագոյնութեան վերաբերող քննութիւններուն: Միւս կողմէ, ֆիզիքական առողջութիւնը նաեւ ազդեցութիւն կը կրէ, կ'ըսեն մասնագէտները: Աւելի մեծ թիւով տղաք բացառելիքներ մարզանքի կը հետեւին, եւ աւելի մեծ թիւով տղաքիկներ կը հիւանդանան, ըստ Սթեֆֆօյի եւ Պաթըրի:

Միւս կողմէ, Սան Տիեռնի պետական համալսարանին հոգեբանութեան դասախօս Ճէյմս Սելլիս կ'ըսէ, թէ դպրոցներու մէջ մարմնակրթանքի լաւ ծրագրուած դասընթացքը լաւագոյն ձեւէ է երեխաները ընտանեկան զբաղումներէն հեռացնելու, դիտել տալով, որ երեխաները ներկայիս կը քաջալերուին պատկերասփիւնին եւ համակարգիչի ինտերֆեյսով կառնած մնալու:

ՄՈՐԹԻ ԽԼԻՐԴԻ ԴԵՄ ՊԱՅԳԱՐՈՂ ՊԱՏՈՒՍԱՏ

Ֆիլադելֆիոյ Թոմաս Ճեֆֆրարն համալսարանը Մայիսի վերջերս յայտնեց, թէ մորթի խլիրդի մահացու տեսակ մը դարմանող նոր պատուատ մը, գոյութիւն ունեցող այլ դարմանումներու հետ բաղադրուած, կարեւոր յառաջիմութիւն արձանագրած է:

Հիւանդին ուսուցիչ բջիշներու օգտագործումով պատուատում պատուատը կրնայ խլիրդի այլ տեսակներու պարագային նաեւ կիրարկուի մինչ քանի որ, ըստ մասնագէտներուն: Պատուատին 4 տարուան ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, թէ վերապրողներուն համեմատութիւնը աւելի բարձր է, քան՝ այն հիւանդներուն, որոնք սովորական վիրաբուժական գործողութիւններու կ'ենթարկուին կամ լիզերով կը դարմանուին:

